



Հաստատում եմ

Հայաստանի շախմատի ֆեդերացիայի

Գործադիր տնօրեն՝

[Handwritten signature]

Զ. Թավադյան

« 03 » 05

2022թ.



Տիգրան Պետրոսյանի ծննդյան 93-ամյակին նվիրված կայծակնային Բաց մրցաշարի

Կ Ա Ն Ո Ն Ա Կ Ա Ր Գ

17 հունիսի 2022թ.

Կազմակերպիչներ.

Հայաստանի շախմատի ֆեդերացիան «Տ.Պետրոսյանի անվան շախմատի տուն-մարզադպրոց» հետ համատեղ

Անցկացման վայր.

ք. Երևան, Խանջյան 50, «Տ.Պետրոսյանի անվան շախմատի տուն-մարզադպրոց»

Մասնակիցներ.

Մրցաշարին մասնակցության իրավունք ունեն միջազգային վարկանիշ ունեցող՝ 2-րդ և բարձր կարգ ունեցող շախմատիստները:

Մրցակարգ.

Շվեյցարական մրցակարգ, 9 տուր:

Ժամակարգ.

3-ական թույլ պարտիայի համար, յուրաքանչյուր քայլի համար 2 վայրկյան հավելումով:

Մրցանակներ.

Մրցանակային հիմնադրամը կազմում է 1 000 000 ՀՀ դրամ:

1-ին տեղ	200 000
2-րդ տեղ	150 000
3-րդ տեղ	100 000
4-րդ տեղ	80 000
5-րդ տեղ	70 000
6-10-րդ տեղեր	50 000

Հատուկ մրցանակներ

Հատուկ մրցանակ կանանց համար	
1-ին տեղ	50 000
Հատուկ մրցանակ մինչև 16 տարեկան պատանիների համար	
1-ին տեղ	30 000
2-րդ տեղ	20 000
Հատուկ մրցանակ վեթերանների (60տ.-ից բարձր) համար	
1-ին տեղ	30 000
2-րդ տեղ	20 000

Մրցանակները չեն կիսվում: Յուրաքանչյուր մասնակից կարող է ստանալ միայն մեկ մրցանակ: Հատուկ և հիմնական մրցանակների հավասարության դեպքում մասնակցին կտրվի հիմնական մրցանակը:

Համաձայն ՀՀ Հարկային օրենսգրքի, մրցանակային հիմնադրամի եկամտային հարկի պահումները՝ 50 000 դրամից բարձր, կկազմի 21%:

Մրցաշարի սկիզբը ժ. 16.00-ին:

Ցուցակագրման վերջնաժամկետն է՝ հունիսի 10-ը, ժ. 16.00-ն:

Լրացուցիչ ցուցանիշներ.

Հավասար միավորներ վաստակելու դեպքում մրցանակային տեղերը կորոշվեն ըստ.

- հատված Բուխհոլցի -1 ցուցանիշի
- Բուխհոլցի ցուցանիշի
- սև խաղաքարերով խաղացած պարտիաների առավելագույն թվի
- անձնական հանդիպման արդյունքի

Մուտքավճար՝ 5000 դրամ:

- 50% զեղչ կտրամադրվի 60 և բարձր տարիքի շախմատիստներին և այն շախմատիստներին, ովքեր ծնվել են 31.12.2005թ.-ից հետո:
- Գրոսմայստերները, կանանց գրոսմայստերները, միջազգային վարպետները, կանանց միջազգային վարպետները ազատված են մուտքավճարից:

Վճարման կարգը.

Մասնակիցները վճարումները պետք է կատարեն հետևյալ բանկային հաշվին

Շահահառու՝ Հայաստանի շախմատի ֆեդերացիա ՀԿ

՝ՄԲԱՐՍՍ՝ Բանկ ԲԲԸ

1510002020290100 AMD

Նպատակ դաշտում նշել՝ *կայծակնային մրցաշարի մուտքավճար*, մասնակցի անունը, ազգանունը, հեռախոսահամարը:

Մրցաշարի տնօրեն՝ Հրաչիկ Թավադյան

Հեռ.՝ +374 10 52 64 64

Հարցերի դեպքում դիմել՝ 010 55 46 47